


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան 12 Ժ
Վեցամսեայ 6 8
Տարեկան 7 9
Վեցամսեայ 7 9
ՍՄԵՐԻԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50
4 Ա. Ն. ԽԻԿ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՔՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Redaction du
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Редакция
на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չեմ տրուիր

Զանգեզուրի տողը
20 սանդիւն

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Ա.

Մի անգամ տարեկան 21րդ
թիւի խմբագրականով, կրկին այս
խորագրին տակ, ըսած էինք թէ
«նիւթական տեսակետով միայն
մէկ միջոց կայ մեր պուլկարահայ
վարժարաններու վիճակը բարւոյե-
լու: Այն է իշխանապետութեան
հիմնական օրէնքներու բարեհաճ
տրամադրութիւններէն և պուլկար
ազգի հայասիրութենէն օգտուելով,
պետական կամ քաղաքապետական
անտուկէն նպաստ մը սահմանել
տալ: ասոր համար մեծ դժուա-
րութիւններ չը պիտի ծագին եթէ
մի քիչ յօգնութիւն յանձն առ-
նենք»: Բացատրենք:

Պուլկարիոյ ո՛ր հայաբնակ քա-
ղաքը որ երթանք, մեր պաշտո-
նական մարմինները, հոգաբարձու
ու թաղական, ազգային վարժա-
րաններու երեւուածքը հաւասա-
րակշիւութիւն կը թափեն, բայց
ամեն տարի, գրեթէ առանց բա-
ցառութեան, աւելի կամ նուազ
կարեւոր բաց մը չունեցած չեն
կարող հաշիւները գոցել: և ստէպ,
ուսուցիչներուն մշտապէս քանի մը
ամսական տալիք ունենալուն
պատճառաւ, երես չեն ունենար
անոնց գիտողութիւններ ընելու և
երբեմն անձամբ վարժարանները
այցելելով, ասոնց բարոյական,
ուսումնական ու առողջապահական
վիճակին մօտէն հսկելու:

Արդէն ըսած ենք թէ մեր կրթ-
թաղան հաստատութեանց անկեալ
կացութեան դարձանակին համար
ժողովուրդին դրամական օժանդա-
կութիւնը անբաւական է այլևս:
որովհետեւ պահանջը օր քան զօր
կը մեծնայ, իսկ ժողովուրդին տա-
լու տեղերը դժբաղդաբար շատցած
են, մանաւանդ այս վերջին տա-
րիներս, եկեղեցիէ, վարժարանէ
զատ, որբախնամ, աղքատախնամ,
երկրաշարժէ արկածաւորներ, յեղա-
փոխականներ և այլն, և միւս կող-
մէն այս բոլոր թեթեւեղելու հա-
մար ազգային կալուածներէ ու ե-
կամուտներէ ալ զուրկ ենք: հե-

տեւաբար այդ բոլոր պահանջ
ները ափ մը բարեկեցիկ ու զօր
ծաւոր դասակարգին ձեռքը կը
նային: Ասոնց ալ մէկ մասը չտար,
իսկ տուղներն ալ մէկ, երկուք,
երեք, հինգ տեղով, վերջապէս
կը սկսին օձիքներ թոթուել «աղ-
բար, ի՞նչ է այս, տո՛ւր, տո՛ւր
վերջը չը գար» ըսել:

Եւ բնականապէս, այս պայ-
մաններուն տակ եղած նուիրա-
տուութիւնները ու հանգանակու-
թիւններն ալ զոհացուցիչ ար-
դիւնք չեն կրնար ունենալ: Այս
պատճառաւ է որ միշտ կը կաղան
ազգային գործերը, ու հաստա-
տութիւնները անկալուած պտուղը
չեն տար, որով եղած զոհողու-
թիւններն ալ շատ անգամ վրայ
կերթան:

Ահա այս նկատումներով է որ
մենք, պուլկարահայ վարժարա-
նաց վիճակը բարոյեցելու համար,
իշխանապետութեան բարեհաճ օ-
րէնքներէն ու պուլկար ժողովուրդ-
եան հայասէր տրամադրութիւն-
ներէն օգտուել ջանալու պէտքին
վրայ ուշադրութիւնը կը հրաւի-
րենք մեր պաշտօնական ու ջոյ
ազգայնոց:

Կարելի է ըսել թէ այս կարե-
ւոր հարցը և ոչ մէկ տեղ լուրջ
խորհրդակցութեան առարկայ չէ
եղած պուլկարահայոցս մէջ: Թե-
րեւս սրճարանական կամ ժամանցի
ձեւով երբեմն խօսուած ըլլայ,
բայց երբեք գործնական քալ մը
առնուած չէ այդ մասին:

Մենք սահմանադրական երկրի մը
ամեն իրաւունքները վայելող հասա-
րակութիւն մը կը ներկայացնենք:
Իրեւել այդ երկրի հարազատ զա-
ւակները մեր տուրքերը կը վճա-
րենք, զինուորական և քաղաքա-
կան պարտքերը կը կատարենք ա-
մենայն սերով, քուէարկութեանց
կը մասնակցինք և ընտրութեանց
ատեն երկրին այս կամ այն կու-
սակցութիւններէն կը փայտա-
յուրենք ու կը շոյուրենք: Մեր ջոյ
ազաները այսինչ կամ այնինչ կու-
սակցութիւններէն բարեկամ ըլլալով, անոնց
պատկանած կուսակցութեան քուէ
տանելու համար մեր մէջ ածիրա-
ւիտ կըլնեն, և ստէպ, կուսակցու-
թեանց ծրագիրներուն առանց իսկ

վերահասու ըլլալու, մէկ կամ միւս
կողմին հակի կը յանձնարարեն հայ
ժողովուրդին: Բայց մեր ջոյ ա-
զաները բնաւ արթնութիւնը չեն
ունեցած այդ քուէները մեր ազ-
գային հաստատութեան օգտակար
ընկերոջ պայմանին տակ գործածե-
լոք:

Մինչդեռ մեր չը հաւանած թուր-
քերը այդ տեսակետով մեզմէ շատ
արթուն գտնուած են հոս: օրի
նակ, այս անգամ երեսփոխանա-
կան ընտրութիւնը կատարուելէ
քանի մը օրեր առաջ, քաղաքիս
թուրքերը գիտցան առիթն օգ-
տուիլ ու քաղաքապետութեան
անտուկէն 2,000 ֆրանք տարեկան
նպաստ մը սահմանել տալ տեղւոյս
իսլամ վարժարաններուն: Ինչպէս
գիտենք, արդէն իշխանապետու-
թիւնը կրթական նախարարու-
թեան պիտոյնէն մեծկան գումար
մը սահմանած է Պուլկարիոյ իս-
լամ վարժարաններուն, հակառակ
անոնց բազմաթիւ վազըֆներ ու
եկամուտներ ունեցած ըլլալուն:

Մենք ի՞նչ կ'առնենք մեր վար-
ժարաններուն ու հաստատութիւն-
ներուն ինչպատ: Ոչինչ: Որովհե-
տեւ չենք գիտցած մեր ցաւը ներ-
կայացնել կառավարութեան, անոր
չենք գիտեր, չենք գիտցեր օգ-
տուիլ երկրին հիմնական օրէնքին
մեկ տուած իրաւունքներէն:

Թուրքը կ'առնէ իր վարժարան-
ներուն ու միջնակարգներուն համար,
Հրեան կ'առնէ իր Բարուկապետին
համար: Բայց մենք ոչինչ չենք
առնիր: որովհետեւ մենք չենք ու-
զած կամ ուզելուն ձեւը չենք գիտ-
ցած որ առնենք: «չը լացող տղային
ծիծ չեն տար» կըսէ առածը:
Մենք լացով մուրալ չէ որ կ'առա-
ջարկենք, ոչ ալ ոչորմութիւն
ինքերի: ալ երկրին օրէնքին նե-
րած սահմանին մէջ մեր իրաւունքը
յարգել տալու առաջարկն է որ
կըլնենք:

Վերջին տարիներս մեր այս իրա-
ւունքը աւելի կը շեշտուի: զի հա-
զարաւոր փախստական չքաւոր ըն-
տանիքներու զաւակները դաստիա-
րակելու նոր բռն ալ ծանրացած
է պուլկարահայ վարժարաններու
վրայ, աղքատ մանուկները բազ-
մապատկուած են, ասոնց մէկ կարե-

ւորագոյն մասը Պուլկարիա մնալու,
պուլկարահայատակ լինելու սահ-
մանուած է: քանի մը տարիներ
յետոյ անոնցմէ շատերը իշխանա-
պետութեան անձնուէր զինուոր-
ներ պիտի ըլլան: ուստի ասոնց
նախնական դաստիարակութեան
պարտքը ըստ օրինի կառավարու-
թեան կը պատկանի: Բայց հայ
ժողովուրդը այդ պարտքը կամ-
վին իր վրայ առեր է ու անոր
ծանրութեան տակ կը տքայ:
այս պարագային իր իրաւունքն է
քիչ մըն ալ կառավարութեան ա-
ջակցութիւնը խնդրել: Օրինակ
այսօր վառնայի ազգ. վարժարա-
նին մէջ 300է աւելի մանուկներ
կը դաստիարակուին: եթէ հայ
ժողովուրդը իր հացագինէն կըտ-
րելով վարժարանը կանգուն չը
պահէր, այդ 300է աւելի հայ
մանուկները պուլկար նախակրթա-
րանները պիտի յաճախէին: ա-
նոնց համար կառավարութիւնը
անհրաժեշտաբար կ'ամ նոր վար-
ժարաններ պիտի հաստատէր և
կամ եղածներուն վրայ 10—12 հա-
զար ֆրանք ծախքի յաւելում մը
ընել պիտի ստիպուէր: Այսօր
այդ ծախքին կէսը կամ մէկ եր-
րորդը եթէ մեզ տուի, թէ՛ մեր
վարժարաններու վիճակը կը բա-
րելաւի և թէ կառավարութիւնը
կրկին աժան ազատած կըլլայ:

Արդ, մեր այս օրինակուն ի-
րաւունքը յարգել տալու և մեր ան-
հրաժեշտ պէտքը գոհացնելու հա-
մար ի՞նչ միջոցներ ձեռք առնել
պարտինք:

Այս հարցման պատասխանը յա-
ջորդով:

ԳՈՒՐԴԵՅ

ԽՈՒՈՎՈՒԹԻՒՆՔ ՌՈՒՍՈՒՑ ՄԷՋ

Բեղերապուրկէ Էնկերանսան Պիշի
կը գրեն:

Յեղափոխական շարժումը հե-
տզհետէ աւելի մեծ ծաւալ կը ստա-
նայ Ռուսիոյ մէջ: Թվերի և Եէ-
րօսլավի մէջ գործաւորները նոր
խռովութիւններ հանած են: նոյն-
պէս Տօրբաթի Համալսարանին ու-
սանդները այն աստիճան եռան-
դուն ցոյցեր ըրին որ կառավա-

բուժիչները ստիպուեցաւ զգուշու-
թեան համար այդ քաղաքը զօ-
րագունդեր զրկել: Կովկասի մէջ
ալ խռով վիճակ մը կը տիրէ:
Պաթուկի մէջ ողբերգական դէպք
մը պատահեցաւ, որոյ մասին ահա
մէկ քանի մանրամասնութիւններ:

Մարտ 4/17ին Ռոթսիլտի գոր-
ծարանին բանուորները գործա-
դուլ ըրին, որովհետեւ իրենց մեր-
ժուցեալ թոշակի յաւելում և օր-
ուան աշխատութեան ժամերու
նուազման առաջարկը:

Ինչպէս անոնցմէ ոմանք, գոր-
ծադուլին իբր գրգռիչ ճանչցուե-
լով, ձերբակալուած էին, այդ
գործաւորներէն 300 հոգի չորս օր
յետոյ հաւաքուեցան ոստիկանու-
թեան վարչատան առջեւ, պահան-
ջելով իրենց բանտարկեալ ընկեր-
ներուն ազատ արձակումը: Փո-
խանակ անոնց գոհացում տալու,
ազդարարուեցաւ ցրտիլ: Երբ այս
ազդարարութիւնը արգիւնք չու-
նեցաւ, զինուորները պարտաւոր-
ուեցան զանոնք շրջապատել բան-
տարկելու նպատակաւ:

Բայց հետեւեալ օրը Պաթուկի
բոլոր հասարակութիւնը պաշա-
րեց բանտին շուրջը, անոր դռները
բանալով բանտարկեալները ազա-
տելու համար: Այն ատեն վաշտ
մը զօրք խռովարարներուն դէմ
դիրք բռնեցին, իսկ ասոնք կար-
կուտի պէս քարեր տեղացոյցին
զօրքերուն վրայ: այս վերջիններս
ալ հրացանաձգութեամբ պատաս-
խանեցին, որով 13 հոգի մեռան:

Իսկ Մոսկուայի ոստիկանապետ
ժէնէրալ Թրէբովի դէմ գործուած
ոճիրին պատճառը դեռ յայտնի չէ:
Ինչ որ կը գիտցուի սա է՝ թէ այդ
ոճիրին հեղինակը դատաւարակուհի
մըն է Ալարթ անունով, հասուն
տարիքով, և որ շատ պարզ հագ-
ուած, եկած խառնուած էր ժե-
նէրալին խնդրագիր ներկայացնող
մարդոց մէջ:

Յանկարծ նա խնդրագիր ներկա-
յացնողներու խումբին մէջէն առաջ
անցնելով, երկու անգամ կրակ ար-
քաւ վեցհարուածեանով, որուն
գնտակները չնկատուեցան: և երբ
Մ. Թրէբով, պաշտօնեայի մը օգ-
նութեամբ յաջողեցաւ զենքը խել
կնոյ ձեռքէն, տեսան Պէ վեց
գնտակներն ալ իրենց տեղը կեցած
էին: Յանցաւորը անմիջապէս ձեր-
բակալուեցաւ և յանձնուեցաւ ար-
դարութեան պաշտօնային, որ ան-
միջապէս դատական գործողու-
թեանց համար նախնական հարցա-
քննութեան ձեռնարկեց:»

Բեդերսպուրկէ տնտեսած վեր-
ջին տեղեկութիւններն ալ կիմացնեն
թէ այս վերջին շարժումն մէջ
բազմաթիւ ոճիրներ տեղի ունե-
ցած են բարձր պաշտօնեաներու
դէմ: Ժէնէրալ Պորթիքով, կառա-
վարի Ֆինլանտիոյ, վերջին շաբ-
թուս մէջ երեք գաւազրութիւն-
ներու առարկայ եղած է:

Մոսկուայի մէջ ուսանողներու
կազմակերպած ցոյցերուն պատճա-
ռաւ ձերբակալուած 682 անձներէն
95ը, իւր պարագլուխ խռովութեան,
իրկուտք նահանգի սահմանները
աքսորուեցան, ուր երկուքէն մին-
չեւ հինգ տարի ոստիկանական
հսկողութեան տակ պիտի ապրին:
Իսկ 567 հոգի երեքէն մինչեւ
վեց ամիս բանտարկութեան դա-
տապարտուած են: Այս պատ-
ժուողներէ միայն մէկը Լազարեան
Ճեմարանի ուսանողներէն է: Կան
նաեւ անոնց մէջ 55 ուսանողուհի-
ներ և 34 ալ ոչ-ուսանող զանա-
զան դասակարգէ այրեր ու կի-
ներ:

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ

Տ. Յակոբ Աւագեանէ որ խմբա-
րատունն հանդիպի, ուր պիտի հա-
ղորդուի իրեն զինք շահագրգռող ու
նպատաստ որ տեղեկութիւն մը:

մարելի կերպով ժպտեցաւ ու իր տրտ-
մալի աղուոր աչքերը կուրծքին վրայ
խոնարհեցուց:

— Ի՞նչ է ա' ունդ, հարցուց Սի-
րիլ խաղաղասալի ձայնով մը:

— Անունս Ասադիկ էր, Աղա-Պէ'կ,
բայց հոս Լաւիզար կը կոչուին, պա-
տախանեց մանկամարդ աղջիկը:

— Ինձի նայէ', Լաւիզար', թոթո-
վեց Ալի-պէկ ճնշուած բացատրու-
թեամբ մը: Գիտե՞ս թէ ո՞ւր քնացած
է Միրզա-Պէկ:

— Գիտեմ... Ի՞նչ կայ որ...

— Անոր մօտ կուգիմ երթալ:

— Անոր մօտ կուգէք երթալ'...

— Այո':

— Ի՞նչ ընելու համար:

— Կուգեմ տեսնել զինքը:

— Գիշեր' ատեն... Ի՞նչպէս կարելի
է... քանի որ հարեմին մէջ կը գտա-
նուի: Ի՞նչու առտուան չեք սպա-
սեր:

Ալի-Պէկ լեցուած էր... ա' չկրցաւ
ծածկել իր գիտաւորութիւնը:

— Մտիկ րբէ', Լաւիզար', բացա-
զանչեց երկտասարդ քուրաք. հո՞ս,
վերն' Աստուած ու վարը' մենք եր-
կուքս կը գտնուինք: Դու իմ ամենէն

ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆ
ԹԱՂ. ԽՈՐՀՐԴՈՅ
Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՌՆԱՅԻ

Սկսեալ 1899 Դեկտ. 1է—1902 Փետ. 28

ՄՈՒՏՔ	Ֆր. ՄԱ.
Ե. մուսնական վկայագիրներէ	69. —
Գերեզմանատան մէջ անակի մը շինութեան ի նպաստ տիկնոջ մը ձեռք և կոծ հանգանակութենէ	93.70
Մկրտութեան վկայագիրներէ	149. —
Թաղման հասոյթներէ	2,459. 0
Պատկո ամի հասոյթներէ	1,650.25
Տ. Սարգիս հօր ձեռամբ ե- ղած հանգանակութենէն	2,218.75
Վաւերացումներէ	88.05
Յատուկ պատարագներէ	331.25
Լիզարտաց համար շրջապա- ուած պնակներէ	333.40
Լիզարտայիններէ հաւաքուած	
ազգային տուրք	456. —
Նու իրատուութենէ	13. —
Կալուածներէ	2,117.30
Ի. զագինէ	3,086.75
Աւագանի տուրքէ	553. —
Հալաւ-օրհնութիւններէ	531.60
Բանկայէն	7,302.27
Պարտք զանազանաց (Մայր հաշիւ թիւ 13. 88)	602.42
	22,054.85

Ե Լ Ք	Ֆր. ՄԱ.
Սորհրդարանին համար առ- նուած կարասիք	21.40
Ահմէտ Պիճանի պարտքին	
համար վճարուած տուր	292.60
Նախորդ Թաղ. խորհրդէն մնացած Ահմէտ Պիճանի եւ Սանտալեանի պարտքը վճարուած	2,647.50
Գերեզմանատան համար զըն- ուած կղմիւնտ	44. —
Նախորդ Թաղ. խորհրդէն մնացած ապահովագրող- չէքի պարտքը	294.40
1900էն սկսեալ վճարուած ապահովագրողչէք	144.10
Աղքատներու վճարուած	279.77
Հոգաբարձութեան 1898ին Վէլիօ հաճի Բէլչէֆ եւ ընկերութեան ունեցած պարտքը վճարուած	1,131.55
1899 դեկտ. 1էն սկսեալ մինչ	

նուիրական երգումիս հաւատալով
յայտնեցիք գաղափարներդ՝ պէտք է' ես
ալ քու երգումդ առնեմ ու այնպէ'ս
ըսեմ թէ ի՞նչ է դիտաւորութիւնս այս
պահուս եւ թէ ինչու կուգեմ այդ ա-
նարդ մարդուն մօտ երթալ'...

Լաւիզար ճիգ մը բրաւ՝ իր հոգեւոյն
ըովանդակ դառնութիւնը խղիւղու չափ:
Աչքերու տաք արցունքները սրբեց ու
ըսաւ.

— Կերդնում իմ լոյս հաւատք'ս
վրայ, Աղա՛-Պէկ:

— Խիտ լաւ, գիտցիր որ նպա-
տակս է քու կեանքը փրկել անկից...
արդեօք կուգե՞ս, եթէ ո՛չ հոս կը
մնաս, յարեց Ալի-Պէկ:

— Հոս մնալ'... ո՛չ, երբէ'ք, եր-
բէ'ք չեմ ուզեր այստեղ մնալ...

— Պիտի ուզե՞ս ինձի հետ գալ:

— Այո', անկարելի է այդ...
Միրզա-Պէկ չի ըրողը ու դուք հետդ
տանք զիս:

— Այո', գիտեմ թէ Միրզա-Պէկ
չպիտի թողու որ ես տանեմ քեզ քու
հայրենիքը: Բայց ատոր միջոց մը
կայ:

— Ինչպէ'ս:
Այս գիշեր միասին կը փախչինք:

28 փետրվար 1902 Աղգա- յին վարժարանաց Հոգա- բարձութեան վճարուած	9554.37
Ս. Եկեղեցույ եւ խորհրդա- րանի ծախս (")	717.50
Այցելու հովիւին համար տան վարձք ուսեստ Խույլի	311.65
Հիւրմիւստան Տ. Գեորգ քա- հանայի ճանապարհածախս	50. —
Վարտուղարի, Լուսարարի եւ Ժամակոչի ամսաթոշակ 4, 420. —	
1902 տարւոյ Ս. Մինդեան առիւիւ գարապետի մը վճարուած	30. —
2թիւալիւի, մեղրամոմի, մոմագործի եւ սքարմա չէթի	1,595.45
Պահանջ զանազաններէ (Մայր հաշիւ թիւ 9. 49. 105 120 121. 122)	431.52
Մնուկը պատրաստ գրամ	89.02
	22,054.85

Վասն ճշգրտութեան հաշուոյ կը ստո-
րագրենք

Ի դիմաց Թաղ. խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Ս. Կարաիւշուան Յ. Մ. Թովմասեան
Վառնա 26 Մարտ 1902

Ներկայ հաշուեկշիւին մէկ մէկ օ-
րինակներն ալ ի տես դրուած են թէ
խորհրդարանը եւ թէ եկեղեցույ բաղը
գիտողութիւն ունեցող պատ. ազգա-
յինք լստ Սանտալեանի պար-
տին թուականէս մինչեւ 21 օր Թաղ.
խորհրդարան գիմելով պէտք եղած
բացատրութիւնն առնուլ: Սոյն պայ-
մանաւամէն ետքը ըլլալիք ու եւ է
գիտողութիւն անշուշի կը մնայ:

ԹՂԱՎՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՈՆՍԹԱՆՑԱ, 24 Մարտ

Արտասանմանի հայ գաղթականու-
թեան մէջ, զուցէ ամենէն նուազ
արձանագրուածը, հայ օրագրութեան
մէջ Գոնսթանցայի աղգայնոց կեանքն
է, ուր սակայն այնչափ յիշատակելի

(*) Եկեղեցույ եւ խորհրդարանի ծախսն
է, խուճկ, քարիւղ, եկեղեցական
անօթներու նորոգում, թուղթ տե-
րակ, հեռարկի նամակածախս եւ այլն:

— Փախչիլ'...
— Այո':
— Ո՛չ չէ՝ որ դուք այդ պատճառաւ
անպատուիք, չէ՞ որ ձեր անունը պի-
տի կոտորի'...

— Ընդհակառակը: Մեզ համար պու-
տի է աղատել գերեզման մը որ հայ-
րենիքիս մէջ ծնած է ու մեր ֆիւնե-
րէն է: Միրզա-Պէկ քեզ հոս բերելով
ոչ միայն անպատուած է քու հայրդ
եւ քու ազգութիւնդ, այլ նաեւ բո-
լոր Հայտերանցի պէկերը: հետեւա-
բար իմ պարտականութիւնս է այդ
ճեւղէն իմ վրէժս լուծել եւ ազա-
տել թէ' Հայտերանցիներու պատիւը
եւ թէ' քու անմիջական ծնողքդ պա-
տիւը: Միթէ՞ չես կարօտցած ծնողքդ,
աղգականներդ ու բարեկամներդ:

— Ինչպէ'ս չէ... Ինձէ՞ս այս չորս
տարուան մէջ խաճա՝ ջո՛ւր է, կե-
րածա՝ կերակո՛ւր է, Աղա-Պէկ: Ամե-
նեւի՛ն. միշտ կուլում, միշտ կը հա-
ռաչեմ... Բայց գաղտնի կը պահեմ,
որովհետեւ հարեմին մէջ մէկու մը
չեմ կրնար յայտնել իմ ֆիւլի ըլլալս...
եթէ իմանան որ ես ֆիւլի աղջիկ եմ,
կը թուաւորեն զիս անպատճառ:

— Ըսի թէ վերն' Աստուած ու վարը՝

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ (7)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԻՐԶԱ-ՊԵՒ ԻՐ

ՀԱՐԵՄԻՆ ՄԷՁ...

— Այն, գիտէի որ դուք կատէք
ֆիւնիքը, մըմնջեց թշուառ աղջիկը
մորմոքուած ձայնով մը, անոր համար
չէի համարձակեր ո՛վ ըլլալս յայտնե-
լու:

— Հոգ չէ... ուրախ եմ որ հասկցայ
այս անարգ մարդերուն ի՞նչ ըլլալը՝
հասկցայ թէ անունով միայն ազնուա-
կան են, ո՛չ թէ մեր նախահայրերու
արիւնը կը կրեն: Իրաւ է որ ֆիւնիքը
կատեմ... սակայն կան ֆիւնիք, ու-
րոնք այնքան սիրելի են ինձի, որ-
քան իմ ազգիս զաւակները...

Մանկամարդ աղջիկը գրեթէ անըն-

նիւթն կը գտնուին՝ իրենց անհնար
տեսակ գոյներով ու ձևերով։

Այս երեւոյթը գուցէ քաղաքիս ազ-
գայնոց համեստ երեւնալու տենչն է,
որ խօսելէ աւելի՝ գործելու ձգտումը
ունենցած է միշտ։

Այլ սակայն, աւելորդ աշխատու-
թիւն մը չեմ նկատեր յետ այսորիկ,
յաջորդաբար արձագանգն ըլլալ մաս-
նաւորապէս քաղաքիս ու առնաս-
րակ Ռուսմանիոյ Կայսրութեան ազգային
կեանքին, ներկայացնելով զայն ար-
տասանմանի հայութեան։

Վերջին լուրը քաղաքիս Ս. Եկե-
ղեցւոյ եւ ազգային վարժարանի
թաղ. խորհրդոյն ընտրութիւնն է
որ կատարուեցաւ նախորդ եօթնհա-
կին մէջ։ Այս վերջին երեք տարուան
մէջ, չորրորդ անգամն է որ ընտրու-
թիւն տեղի կունենայ. ազգային գոր-
ծերը ղեկավարող մարմին մը ստեղ-
ծելու համար։ Անցեալին վրայ գո-
ցէ առիթ ունենալով անգրագիտա-
յու ապաւային մէջ։

Նորընտիր թաղ. խորհրդոյ անդամ-
ները, որոնք քուէից բացարձակ ա-
ռաւելութեամբ ընտրուեցան, հե-
տեւեալ անձնաւորութիւնները են.

- Տիար Արամ Ագաբեան
- » Արմենակ Մանուկեան
- » Թադեոս Պենյեան
- » Պատրոս Ազնաւորեան
- » Տիգրան Արթուրեան

Որչա՛փ ալ՝ թէ տրլուոյ հայ հասա-
րակութիւնը եւ թէ՛ ըստ կարգին,
մենք բացարձակ վստահութիւնը ու-
նինք այս նորընտիր մարմնոյն զա-
նազան բարեմասնութեանց վրայ՝ ազ-
գային գործերը յաջողապէս ղեկավա-
րելու մասին, այլ սակայն այժմէն
իսկ, զէպի լաւը կամ վատը, գու-
շտկութիւն մը ընելու կարողութիւնը
չունինք՝ իրենց նկատմամբ, անոնց
ապագայ գործառնութեանց եղանակը
պիտի պարզէ ամեն բան, որը իրենց
ճշմարիտ արժանեաց կշիռն պիտի
ըլլայ միանգամայն։

Ինչպէս առհասարակ ամեն տեղ,
նոյնպէս մեր անկախութիւնը՝ նորըն-
տիր թաղ. խորհրդէն, շատ պարզ է
եւ որոշ. — Պաշտօն պահել Ս. Եկե-
ղեցին ու հիմնական ազգային գա-
տիարակութիւն մը տալ մեր ապագայ
սերունդին։

Ու ասոր համար նորընտիր անդամ-
ներուն ոչ մէկ միջոց չի պակսիր, ե-

տասարգ, բացատրութիւն մը միայն,
ու մանաւանդ կորովի ուժեր, օժ-
տուած մտային կարողութիւններով ու
իրարու գաղափարակից, որոնք ունին
իրենց զօրավիզ ալ քաղաքիս հայ հա-
րակութիւնը, որ իր վերջին լուսն
չի զլանար վարժարանի յառաջդիմու-
թեան համար։

Յիշենք նաեւ թէ քաղաքիս երկու
հաստատութիւնները եկեղեցի ու վար-
ժարան, ազգային ըստ կամս նուէր-
ներէ զատ, ոչ մէկ եկամուտի աղ-
բիւր ունին ու սոսակաւ ելքին գու-
մարն ալ՝ ներկայ ամսոյս սկիզբէն
սկսեալ բարձրացած է 650 ֆրանքի։

Սրտանց յաջողութիւն, կարողու-
թիւն եւ յարատեւութիւն միանգա-
մայն կը մտածենք նորընտիր թաղ.
խորհրդոյ յարգելի անդամոց։

Ա. ԱՐԵՒԵԱՆ

Յ. Գ. — Միջոցակալ ու ոչ-պաշտօ-
նական կերպով «Ե...»-ի խմբագ-
րապետ Տ. Վարդգիսի կուգէինք յայ-
տարարել թէ, ամիսներ առաջ՝ քա-
ղաքիս երկրաստարդին՝ Պ. Սիսակի
նկատմամբ իր պահանջած մէկ վկա-
յազիրը — յանձին Տ. Գոմարէթեանի
իր մէկ վկայադրութիւնը «Ե...»-ի
մէջ տպուելուն — եթէ երբեք քաղա-
քիս Բարեգործ. Ընկ. վարչութիւնը
իր ժամանակին չը կարողացաւ տալ,
ստոր պատճառը ուրիշ բան չէր, եթէ
ոչ՝ ճիշդ նոյն ատենները, վարչու-
թեան նոր ընտրութիւնը ու յարակից
աշխատութիւնները։

Վարչութիւնը ոչ միայն կրնայ
վկայել Պ. Սիսակի պատուաւոր երի-
տասարգ մը ըլլալուն, այլ եւ անոր
պաշտպանած նիւթին ալ կրնայ ձա-
նակցել իբրեւ կատարուած եւ Տ.
Գոմարէթեանի պատուաւոր իրական
ճշմարտութիւն մը։

Նոյն

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս ամեն տարի Պօլսոյ
Աղբ. Հիւանդանոցին ինպատ-
պարահանգէս կը տրուէր, այս տա-
րի կառավարութիւնը շատ գեթ-
ուարաւ միայն նուագահանգէս մը
տալ արտօնեց, այն ալ Սուլթանի
մասնաւոր իրաւունքով։ Այս արտօ-

նութիւնը բացառիկ մեծ շնորհ մը?
Նկատելով, Օրմանեան շնորհակալու-
թեան և երախտագիտութեան ու-
ղեւծ մը խմբագրած ու քողա-
քապիտ ընտելան փաշայի միջո-
ցաւ Սուլթանին մատուցած է։

Նուագահանգէսը կիրակի իրի-
կուն թէքէ Պաշի թատերասրա-
հին մէջ տեղի ունեցաւ ու շատ
կարճ տեւեց, 900 լիրայի չափ
հասոյթ մը գոյացրեց է. միայն
40—50 ոսկի ծախք եղած է.
թատերասրահին վարձք չէ վճար-
ուած, Օսմ. պանդան 30 տոմսակ
գնած է։

— Պարսկ-Հնդկաստանի նորըն-
տիր առաջնորդ Սահակ եպիսկ.
Ա. վստահան Պարսկաստանի Սաւը-
րազմէն սիրալիր ընդունելու-
թիւն գտած է։ Այս վերջինը
գոված է պարսկահայոց ընդու-
նակութիւնները, խոստովանած է
թէ Պարսկաստանի վաճառակա.
նութիւնը շատ բան կը պարտի
հայոց, և խոստացած է աջակցիլ
անոնց յառաջդիմական ձեռնար-
կութիւններուն։

— Կարինէ 150 ազգայնոց ստո-
րագրութեամբ հանրագրութիւն
մը զրկուած է Պատրիարքարան,
ինքերելով որ Սանասարեան վար-
ժարանը թարգմերդ չի փոխադ-
րուի։ Նոյն իմաստով հանրագրու-
թիւն մը ալ կարնոյ Գաւառ. վար-
չութեան ներկայացուած է։

— Հալէպի Պէլէն գիւղէն քա-
հանու մը և 10 աշխարհական
ազգայիններ երկար տեսնէ ի վեր
բանտարկուած էին քաղաքական
աժդատութեամբ։ Անցեալ օր
Հալէպի վճռալինջ տեսնին առ-
ջեւ դատավարութիւնը տեղի ու-
նեցած ըլլալով, 10 ազգայինները
անպարտ արձակուած են, իսկ
քահանան մէկ տարուան բանտար-
կութեան դատապարտուած է։
Ը դհ. դատաւարը այս վճռէն
գոհ չըլլալով վճռարեկ տեսնին
(թէմիկ) դիմած է։

— Ընթերցողք գիտեն թէ Գա-
րակեօզեան Որբանոցը պիտի կա-
ռուցուի Սկիւտար Պալեան Սար-
գիս պէլի ազգին կտակած գետ-
նին վրայ։ Այժմ Սարգիս պէլի
ժառանգորդ երկու տիկիններ
խնդիր հանած են թէ այդ գետնի
միւթէվէլին իրենք են։

Խնդիրը Դէրիի գաւառանին և
էվգաֆի վարչութեան մէջ կը յուզ-
ուի։ Այս վերջինէն կարգուած
յանձնախումբ մը յետ քննութեանց
վճռած է թէ այդ գետնը հայ
ազգին վազրֆ եղած է, բայց
միւթէվէլին ով ըլլալը դեռ չէ
որոշուած։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Վանի մը շաբաթէ ի վեր Ֆինլան-
տացիք Սթոքհոլմ մէջ թերթ մը կը
հրատարակեն ուսու կառավարութեան
դէմ սոսկալի յարձակումներ պարու-
նակող եւ Ֆինլանտիոյ իրաւունքները
պաշտպանող։ Հետեւաբար այդ թեր-
թին Ռուսաստան մուտքը խստիւ ար-
գելուած է։ Բայց Ֆինլանտիոյ նոր
ուսու կառավարիչը զարմանքով կը
գիտէ թէ այդ թերթէն բաղաժիւ-
օրիսակներ գաղտնի զը մտնեն։ Կա-
ռավարիչը, ժէնէրալ Պօքրիքով, հետա-
մուտ կըլլայ հակառակ համար թէ
իսպալէս եւ ինչ ճամբայով կուգան
թերթերը։ Ինքն ալ բաժանորդ գըր-
ուեցաւ սոյն թերթին, որուն հաս-
ցէս թերթին ճակատը արդէն նշանակ-
ուած է։ Լրագրիւր սկսաւ կանոնաւո-
րապէս իրեն կառավարչական պալատը
հասնել։ Պօքրիքով շատ զարմացաւ.
լրտես պաշտօնեայ մը զրկեց Սթոքհոլմ
խորպալէս քննութիւն մը կատարուե-
լամար։

Նլ ո՛ր աստիճանի հասաւ կառա-
վարչին կատաղութիւնը, երբ, քանի
մը օր վերջ, լրագրիս առաջին երեսին
մէջ տեսաւ իր զրկած լրտեսին պատ-
կերը շատ յաջող կերպով նկարուած.
բնականապէս այդ պաշտօնեան ետ
կոչեց անմիջապէս։

Պիւմիկէմի մէջ դատուեցաւ ա-
մուսնութեան խոստումը զրգած ըլ-
լալու ամբաստանութեամբ անգլիացի

մենք ենք այս սենեկին մէջ, Լալե-
զա՛ր, ընդհատեց Ալի-Պէկ սրտաշարժ
ձայնով մը, պէ՛տք է վստահիս ինծի
բոլոր հոգեւորդ եւ գիտնաս թէ ես
աղնուական քուրտ պէկի մը զաւակն
եմ ու չեմ խաբար քեզ։ Այս սենեկէն
զուրկ, առանց քեզի, թո՛ղ իմ գլուխս
երթայ։ Միայն թէ ժամանակ չկոր-
սնցուցած յայտնէ՛ք Միւրզա-Պէկի
նշխանեակը...

— Բայց ինչո՞ւ համար անպատճառ
հո՛ն կուգես երթալ։

— Քու վրէժդ պիտի լուծեմ...

— Ինչպէ՛ս...

— Ըսել կուգեմ թէ անպատիւ մա-
դու մը Պէկ անուն տալով պարզապէս
նախատինք մըն է մեր բոլոր ցեղա-
կիցներուն։ Ես որ հակցայ ամեն
բան... մի՛թէ հաւասարապէս անուա-
նարկուած չեմ նկատեր ինքզինքս,
երբ այս հրէշը զե՛ն ողջ մնայ և քեզի
պէս գերուհիներով պղծէ մեր աղնուա-
կանութեան արիւնը։

— Սպաննե՛կ կուգե՞ք զինքը...

— Այո՛...։

— Ո՛չ, ո՛չ, չեմ ուզեր... մի՛ ը-
նէ՛ք... մեղքե՛ք ինքզինքնիդ... մի
երթա՛ք այդ ճիւղին քով... որով-

հետեւ յանկարծ կարթննայ եւ ձեզ կը
սպաննէ...

— Աստուած ինծի հետ է, Լալեզար,
կը հաւատա՞ս որ քարի գործ մը կը
յաջողի անոր ձեռքով։

Լալեզար չլիցցաւ պատասխանել,
Քայլ մը առաւ... զողորմալով մտնեցաւ
Ալի-Պէկի ու անոր ձեռքը բռնելով
այնպէ՛ս մը նայեցաւ աչքերուն մէջ
ինչպէ՛ս թշուառ մը կը նայի իր բա-
րեբար հրէշապիկին։

— Կեցի՛ր, Աղա-Պէկ, կանաչ ա-
րեւուդ սիրո՞յն ըլլա՞ւ... Կեցի՛ր որ
յայտնեմ թէ միասին պիտի մտնենք
այդ հրէշին հարեմը, միասին պիտի
մօտենանք անոր արիւնոտ անկողին
և միասին պիտի լուծենք մեր
վրեժը...

— Միտսի՞ն...

— Այո՛...։

— Անկարելի է... ասով չենք կըր-
նար յաջողիլ։ Պէ՛տք է դուն բակէն
կամացուկ մը անցնելով պարտէզը
մտնես, մինչեւ որ դամ... եթէ ո՛չ
վտանգի կենթարկուինք։

— Չէ, չեմ ընդունիր... կա՛մ քեզի
հետ պիտի մտնեմ ազգ գազանաբորոյ
մարդուն սենեկէն ներսը կա՛մ թէ

քեզի հետ պիտի ազատուիմ։
Ալի-Պէկ փուճ տեղ ջանաց համո-
ղել։ Լալեզար անդրդուելի մնաց իր
որոշումին մէջ։

— Ուրեմն չպատահե՞ք... Ըսաւ Ալի-
Պէկ՝ հոգեկան անզուսպ կատաղութե-
նէն տանջուած ձայնով մը։

— Երթա՛նք... վրայ բերաւ Լալե-
զար։

Երկուքն ալ սենեկէն դուրս ելան,
կանաչոցին նեղ միջանցքը շարունակե-
լով դուռի մը առջին կանգ առին։
Գուռը կամացուկ մը հրեց Ալի-Պէկ
ու ներս մտաւ Լալեզարին հետ։

Սենեակը մուծ էր... Բայց Լալե-
զար առաջնորդեց զինքը։

Անկիւնը, խաւար ստուերի մը
մէջ, անկողին մը կար ուր պառկած
էր Միւրզա Պէկ։

— Ա՛հ, մինակ է եղեր... մըմնջեց
Ալի-Պէկ կամաց ձայնով մը։

— Այո՛, այս ճիւղաղը հարեմի կիւն-
րուն քով մինչեւ առաւօտ չմնար,
նկատել տուաւ Լալեզար։

Ալի-Պէկ ձեռքը կուրծքին տարաւ,
ծոցէն դաշոյն մը հանեց ու անկողին
մտաքսայեա վերմակը կիսովին մէկդի
տաննէն ետքը, Միւրզա-Պէկին բե-

րանը գոցեց ու բոլոր ոյժով դաշոյնն
անոր սրտին խրեց...

Լալեզար անոր ոտքերը բռնեց ու
հարուածով մը դաշոյնին դարկաւ...

Գազանաբորոյ մարդը ճչել ուզեց,
պոռալ ուզեց, շարժել ուզեց, ան-
կողնէն ելել ուզեց... վերջապէս օգ-
նութիւն մը կանչել ուզեց... բայց
անօգուտ բա՛ն։ Ալի-Պէկ իր բոլոր
զօրութեամբ գամած էր զինքը ան-
կողնին մէջ։

Արեւնը սրտէն ու բերնէն դուրս
պորկաց Լալեզարի ձեռքերուն վրայ,
զոր չըթուէր քններուն տարաւ եւ զայն
ծծեց պապական ու անյագ ծարաւով
մը։

— Շո՛ւտ, Լալեզա՛ր, շուտ ըրէ՛,
որ փախչինք... մեր վրէժը լուծուե-
ցաւ, միմեջեց Ալի-Պէկ։

Լալեզար ծոցաւ գարշելի դիակին
վրայ ու անարգ թուր մը նետեց ա-
նոր երեսին։

Ու առանց չշուկ մը հանելու, եր-
կուքն ալ բակին յետնակողմէն ուղ-
ղակի պարտէզը մտան եւ արագ արագ
հեռացան գիշերուան մթութեան մէջ։

(Շարունակելի)

օրերից Բաթի Պրիզըն. իր հին նշանածէն տուգանք պահանջողն էր Պարսիկ մը, սա լրջօրէն սիրահարուած էր օրիորդին, որ արդէն 47 զարուհներ ողջունած, բայց 2000 ոսկիի հարստութիւն մը ունէր: Ըստ սովորութեան փոխանակած էին սիրային նամակներ, լուսանկարներ եւ մատանիներ: Սակայն օր մը յանկարծ Օր. Բաթի ետ ուզեց իր նշանածին տուած բոլոր առարկաները եւ ուղղած նամակները, ու իմացուց իր սիրահարին թէ ամեն յարաբերութիւն խղած է իր հետ: Պարսիկը, փոխանակ վնասելու, նամակները փաստաբանի մը յանձնելով դատի գիմեց ընդդէմ Մր. Պրիզընի, իբր գրծող իր խոստումը: Դատարանը 50 ոսկի տուգանքի դատապարտեց անզլիացի օրիորդը:

Ականջներն խօսի տարին քանի մը անգամ նշանուող ու նշանած փոխող Նոստ-Տիգրան աղջիկներուն:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԳԻՒԱ

Թիւրք մէնպատնտան նէշէթ իտուպ Սթանպուլտան ալընան Ապ. ռի 8 թարիխի պիր թէշէկրաֆ եազիյօր. «Մաքէթնիսնըն ահալը հազըրէսինտէն տօլայը Պէրլինտէ վէ Պէլկրատտա եաեւըմըլ օլան հալատիսաթ միւպալաղալը (չափազանցեալ) տըրլար: Մակէթնիստա զուհուր իտէն վուգուաթլարըն Ապանիատաթի վուգուաթլար իլէ շուսուլի եօգտըր, վէ մէզըիւր վուգուաթլար թէհ-լիքէսիլ տիր: Եիմտիլէ գատար եալընըլ տէօրթ պուկար չէթէլէրի Մաքէթնիստա ըսպաթը զիճուտ իթմիշէր վէ պուշլար տախի թիւրք ասքէրլէրինտէն տաղըտըմըլ տըրլար»:

— Սթանպուլ մահպուսանէսինտէն սէրպէսթ պըրադըմըլ օլան իսա Պօլէթիսնագ նամ արնափուտ րէյիսի Մօլլա Ջէքքանըն գաթիլլէրինին քէնտի էլինէ թէսիլմ օլընմալարընը թալէպ իթմէքտէ տիր: Մալիւմ օլտըլը իւզրէ նամտար հայտուտ Մօլլա Ջէքքանըն ասըլ գաթիլլի թիւրք ժանտարմա գապիթլէրինտէն պիր արնափուտըմըլ չիմտի հիւքիւմէթ քէնտի գապիթիլին Արնափուտարըն եէտի ինթիգամընա թէսիլմ իտէճէք մի պուրասը տըգգաթա շայան տըր:

— Աթանու Նասիօնալըն վէրտիկի մալիւմաթ պինաէն, Վիէննա վէ Բէթէրպուրկ գապիլլէրին սուլհը տահա զիյատէ թէմին իթմէք մաքսէտի իլէ 1897տէն պէրու Պալաւալար իշիւն մուգուլլէր օլան մուգալլէլին շարթլարընը կէնիշլէթմէք խուսուսընտա միւզէքէրէյէ միւպաշէրէթ իթմիշէր տիր:

Պու հալատիս սահիհ իսէ, Մաքէթնիս վէ Ապանիս իշիւն եէնի թէրթիպաթ պէքէնիլի: Պու հալտէ Մ. Տանէվին Բէթէրպուրկ միւրաճաթը սէմէրէսիլ գալմըլ օլմայաճագ:

— Գըրգըիլիսէ եազընընտա 4 պուկարլարըն 3 թիւրք քէօյլիւի վէ պիր չօճըլը իսքէնէլէրլէ գաթիլ իթմիշ վէ սօնիս Պուկարիս թօրաղընա գաշլըլ օլտըզլարընը իտիրնէ վալիսի պիլտիրմիշ տիր:

Պուկարլար պու ճիւլլէթի ինթիգամ ալմագ մաքսէտի իլէ իճրա իթմիշէր:

ՏԱԽԻԼԻՑԷ

Վիւքէլա րէյիսի Մ. Տանէվին Բէթէրպուրկտա պիր գաշ կիւն զիյատէ գալմաթ տըգգաթը ումուսի տահա զիյատէ օնօգթալաճէլպ իթմէքտէ տիր: Հիւքիւմէթ թարաֆտարլարը պու եօլըրլըգտան պէօյիլ մուհաւէնթ պէքլէյօլար: Մուխալիֆ ֆըրգալարըն միւրէվիլիսէ էֆքեարը օլան ճէրիտէլէր, պա խուսուս Սթանպուլլիսիլլէրին Նօլլի վէգ կազէթաթը շէտիտ լիսանլէ հիւքիւմէթի թայիպ իթմէքտէն մատա, Բուսիտան Պուկարիսալ պիր գօլըլօ հազըրլանտըրըն տախի տէրմէյօն իթմիշ տիր: Կէօհա՝ էվիլէրի սէնէ Բուսիտան ալմէթ իտէն զապիլլէր Պուկարիսնըն իտարէի հազըրէսինի Բուսիտա եարաեաճագ սուրէթտէ թէպտիլ իթմէք զայրէթիտէ պուլընըրլար ըմըլ Մէզըիւր կազէթա պու եօլտա իլ վիսաթլար իլէ Ֆէլսամ: Բրէնս Ֆէրտինանտըն տըգգաթըն տալէթ իտուպ, շիմտիքի գապիլլէրի վէ Սպարանիլի տաղըտմագ թէքլիֆ էլլէմէքտէ տիր: Հալպուքի Մ. Տանէվին Բուսիտան պիր չօգ մէնֆատթ էլտէ իտէպիլլէլինէ տայիր հիւքիւմէթ կազէթալարըն հալտըզլարընտան զիյատէ, Նօլլօսի նամ մէհուր րուս կազէթալարըն պու պապտէ պէյան իթմիլի էֆքեարլար րէք մուհիւմ տիր: Նօլլօսի տէյօր՝ «Պուկարիսնըն շուսըրա Բուսիտան պուլաճաղը միւթէտտիտ մէնֆատթլարտան եալընըլ պիրինի զիքը իթմէք քեաֆի տիր:

«Բուսիտանըն Չին իշիլի իշիւն 400 միլիօն Ալանիտան իսթիգալ իթմէք թէքլիֆի իւզէրինէ Ալմանլար 40 միլիար րուպիլէ եօտիւն խարա զէրմէք հազըրլըլընը կէօսթէրտիլէր, եանի իսթէն իշիւնտէն 100 գաթ զիյատէ: Բուսիտանըն պու տէրէճէ գըրէսիսի պուլընտըլը հալտէ, Պուկարիսալ իթմիլիլա օլան ազճէի քէնտիսի վէրիլ՝ մօնօթ վէ քէֆալթ իսթմէքսիլլին»:

Նօլլօսիին շու պէյանաթը վէ Մ. Տանէվին զայրը Բարիսէ կիթմէյէլինին հալատիսի իսթիգալ մէսէլէսիին սուհուլլէթլէ Բուսիտա հալլ օլընապիլլէլինէ իսթի կէօսթէրիլլէր:

— Հիւքիւմէթ մաքէթնիսլըլարա իսթար իթմիշ տիր քի՛ չէթէլէր թէշէրիլին վէ սիւօրտան կէշմէյէ ասլա միւսատէ իտէմէյէճէք:

— Եէհրիմիլ Մաքէթնիս շիւքէթի իլաննամէլէր չըգարուպ, վաթանտալարընը եարըն սապահ՝ քիլիսէտէն չըգարգտան սօնիս Մաքէթնիսիլէ սայօնընտ տալէթ իտէյօր: Պու իճթիմատան մագսէտ՝ ումուս պիր Գօնկրէ Թէլէմ միւսի իշիւն միւզէքէրէ իթմէք տիր:

ԲՈՒՍԻԱ

Բէթրապուրկտան Լօնտրալա վէրիլէն սօն հալատիսլէրէ կէօրէ, Բուսիտա պու կիւնիլէրտէ պէօյիլէ հիւքիւմէթ մէմուրարընըն էօմրիւնէ սուի գաթիլ իթմէք վուգուաթ րէք չօղալմըլ տիր: Ֆիւնլանտիս վալիսի, Ժէնէրալ Պօրթիքուա գարշը՝ շու սօն հալթիա գարֆրնտա՝ իշ տէֆտ սուի գաթիլ մուսմէլէսի վուգը օլմուշ:

— Քէզա Բէթրապուրկտա րօյիս միւտիրի Մ. Թրէքօլ ֆայիթօյլէ կէզինմէքտէ իքէն, պիրիսի պըլլէլէ իւզէրինէ հիւքիւմ իթմիշ վէ անըն եանընտա պուլընան պիր գապիլլի եարէլէմիշ տիր: Միւս րիմ տէրհալ թուլթուլըլ պուլըն Տարիլ-Ֆիլինտան (համալտարան) գօլմուլմըլ պիր թալէպ օլտըլը գանն օլընըյօր:

— Կրիմին գամաղըլընտա մէտ խէլի օլմագ շիւրհէ օլընան Ժէնէրալ Բիւզլիւրէվաթի՝ խարիճտէ իքէն՝ սուրէթի սէրպէստանէտէ վար շալիսալ ալմէթ իթմիշ տիր:

— Մօսկուտա սօն տէֆա հուսուլա կէլէն գարըլըլըլտան տօլայը տէրտէթլէ մահպուս պուլընըն մէքթէպիլլէր, ապրիլ 8տէ, մահպուսանէյէ ալմէլ վէրմիշէր թէյաշ էսնաթընտա գաշմագ իշիւն: Թուրքմաճըլար եէթիշուպ, եանկընը մէօյիլտէրմէլէ մուվաֆագ օլմուլար տըր: մէքթէպիլլէր իսէ գըրպաճլէ շէտիսէն տէօկիւմիշլէր:

ՅՐԱՆՍԱ

Էրմէնիբէրվէրիկի իլէ մարուֆ վէ Բթ Սիւմէնիսնըն մուհարրիլէրինտէն Մ. Ժօրթ Գլէմանսօնըն վառ գալաթընտան պէօյիլէ էքսէրիլլէթլէ Մէճլիսի Ալան (Ծէրալոյտ) օլգասը ինթիլապ օլընտըլընը թէլէկիւսֆ պիլտիրիլլէր:

ՊՕԵՐԼԷՐ

Ինկիլթէրա բարլըմանընտա վալիս օլան պիր սիւվալէ ճէվապէն՝ Մ. Պալֆուր տէմիշ տիր քի՛ սուլհ միւզէքէրաթլընտան տօլայը հիշ պիր շէլ պէյան իտէմէյէճէք:

Պու հալտէ՝ սուլհ միւզէքէրա թը պաշլամագ իշիւն թարաֆէյն տէն թէմէլ թուլթըն շարթլարըն ինկիլիլլէրէ րէք ֆաիտէլի օլմալտըլը զըմէն անալըլըլ:

— Պիր գաշ ալ մուգատտէմ ինկիլիլլէրէ հէսիլ տիւշմիւշ օլան պօէր Ժէնէրալ Բրինցիկէրի պիր ասը կիպի գուրչուա տիգմէքտէն վալ կէշուպ, եէսիլլիքտէ սաղ սաղլանըլաճաղընը Բիշնէր պիլտիրմիշ տիր:

ԵՈՒՆԱՆԻՍԱՆ

Աթինտա վէ Բիւրէտա պուլընան մաքէթնիսլը Բուլար, «Բանհէլլէնիլլէ» շիւքէթնիս տալէթի իլէ Աթինտա վագը տալիլլիսն սաօնընտ թօրալարմըլ: վէ եօնան հիւթիւմէլին վէ պէօյիլ տէվէթլէրին էլիլլէրինէ խիթապ պիրէր պէյան: նամէ գարառա ալմըլար տըր: մէզըիւր պէյաննամէ իլէ՝ Մաքէթնիստա Պուկարլարըն պաշլըճա Բուլարա գարշը՝ իճրա իթմէքտէ օլտըզլարըն ճիւլլէթ ու թէշիլլէթըն էօնիլիւ ալմագ իշիւն՝ տէվէթլէրին միւտալլէլէ իթմէսին տալէթ օգուլմուլար տըր:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, 30 Մարտ

ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏՈՅ	
Վալոն լիպ. 49-53 հքթ. 7.—/ 8.—	
Արապա լիպ. 48-58 հքթ. 8.—/ 10.60	
ԱՐՔԱ	
Վալոն 100 քիլօ 10.40/10.40	
Արապա 85-45 լիպ. հքթ. 7.—/ 7.60	
ԵՈՒՂԱՅ	
Վալոն 100 քիլօ 13.—/13.30	
ՖԱՍՈՒԼԻՍ 100 քիլօ 12.—/20.—	
ՉԱՎՏԱՐ	
ՄԻՍԻՐ	
Արապա լիպ. 54-58 հքթ. 7.30/ 8.—	
Վալոն լիպ. 100 քիլօ 9.70/ 9.80	
ՏԱՐԸ	
Կիւնտէ 40-50 արապա կէլլէքտէ տիր. Վալոն 2-3:	
Վալոն մուսմէլէսի ալթուս ֆըրանքլէ, արապա կիւմիւշլէ: Նարթէօն 23 հիսապը իլէ:	

ԲԱՄՈՒՔ

Վարնա մաղաղաթընտա իրլիք սաթըլարըլ:	
Ինկիլիլլէ իրլիկի 7. 8-14 9.50	
» 7. 18-24 12.—	
Եէրլի իրլիք 7. 8-14 9.—	
Աթըլմըլ բամուլ հօլդա 2.—	

ՍԱՐԱՅԻՑԷ

Նարդէն 22 ֆրանք 65 սանթ. Օսմ. լիւրաթ 23 ալթուս ֆրանք

ՊԱԳԱՆԻՑԷ

Վարնա բիւցաթընտա պաղգալիլլէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթըլ, ալթուս ֆրանք իլէ:	
ԳԱՂԷ	1.50/1.70
Եէֆէր Նէմցէ	51
» (Բէսմէ) սանտըլ	27.40
Բիւրիւն ճարն շուլալը	35-38
» Ֆիլիպէ »	32.50
» Ինկիլիլլէ »	25.50
» Բիլոն »	45.—
ԿԱՉ Աստըլը	6.70
Ջէթիւն ԵԱՂԸ քիլօ —.90/—.94	
ԳՈՒՐՈՒ ԻԻՋԻՒՄ	— .35

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Վաղը, կիրակի գիշեր, Ժամը 9ին թատերասէր երիտասարդաց կողմէ, ինպաստ Պ. Օնիկ Սէմէր. ճաննի (փաշայի) պիտի ներկալացուի ՍԱՍՆՈՅ ԱՊՍԱՄԲՈՒԹԻԻՆԸ անուն ողբերգութիւնը 5 արար, խիստ ծիծաղաշարժ գաւաշտ մը տաճկերէն լեզուաւ:

Գինիլը գիւրամատչելի:

Հայ երիտասարդութիւն

Одговорникъ Н. Драгулевъ
Печ на Хр. Н. Войниковъ—Варне